ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ 1915-1916թթ.

ՄԻՔԱՅԵԼ ՄԻՆԱՍՅԱՆ

Հայոց ցեղասպանության բազմաբնույթ հիմնահարցի ուսումնասիրության գործում կարևոր նշանակություն ունի Հայ Առաքելական եկեղեցու ղեկավարության դիրքորոշման հետազոտությունը: Սկզբնական շրջանում այս թեմայով ուսումնասիրությունների հիմնական ուղղվածությունը Հայոց ցեղասպանության տարիներին սոսկ արևմտահայ հոգևորականության դերի լուսաբանումն էր:[1]

Հետագա աշխատանքները վերաբերվել են տարբեր կառույցների՝ պատրիարքանների և Էջմիածնի Մայր աթոռի գործունեության հետազոտությունը:[2] Թերի է մնում Ամենայն Հայոց եկեղեցու առաջնորդի և Կոստանդնուպոլսի պատրիարքարանի դերի լուսաբանումը:

Ինչպես հայտնի է՝ Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը Օսմանյան Թուրքիայի երիտթուրքական ղեկավարությանը հնարավորություն ընձեռեց ձեռնամուխ լինել Հայկական հարցի ազգայնամոլական լուծմանը՝ ցեղասպանության միջոցով: 1914թ հոկտեմբերի 15-ին «Իթթիհատ» («Միություն և առաջադիմություն») կուսակցության ղեկավարությունը քննարկեց Հայկական հարցը: Ընդունվեց հայ ազգաբնակչության տեղահանության՝ հետագայում Միջագետքի անապատներում նրանց կոտորելու մասին որոշումը: Առաջադրվեց ռուսական զորամիավորումների հետ առաջիկա բախումների գոտում՝ Արևմտյան Հայաստանում, վերացնել հայ էթնիկ ազգաբնակչության հոծ զանգվածը: Փաստորեն հետապնդվում էր Հայկական հարցը Թուրքիայում հայերի համընդհանուր ոչնչացման քաղաքականությամբ լուծելու խնդիրը: Հոկտեմբերի 16-ին գերմանական սպաների կողմից ղեկավարվող նավատորմը ռմբակոծեց մերձսևծովյան ռուսական քաղաքները:[3] Չորս օր անց Ռուսաստանը պատերազմ հայտարարեց Թուրքիային:[4]

Սկսված ռուս-թուրքական ռազմական ընդհարման մասին Կոստանդնուպոլսի պատրիարք Զավենը տեղեկացավ 1914թ. հոկտեմբերի 17-ին, երբ Բայրամի կապակցությամբ այցելեց սուլթանի պալատ: Լուրն անմիջապես տագնապ ծնեց. պատրիարքը համոզված էր, որ երիտթուրքական ղեկավարությունը կաշխատի սկսված համաշխարհային պատերազմն օգտագործել հայերից վրեժխնդիր լինելու համար: Առաջացած իրավիճակը քննարկելու նպատակով հոկտեմբե-

րի 20-ին կայացավ Ազգային ժողովի Խառը խորհրդի նիստը: Ընդունված որոշումը Կոստանդնուպոլսի պատրիարքին հանձնարարում էր հայ ազգաբնակչության անվտանգությունն ապահովելու համար «զավ հարաբերություններ» հաստատել Թուրքիայի կառավարության հետ: Որոշվեց իր քաղաքացիական պարտքը կատարելու կոչով շրջաբերականներ ուղարկել բոլոր նահանգների հայ ազգաբնակչությանը: Հոկտեմբերի 26-ին պատրիարք Զավենն այդ որոշումը ներկայացրեց Թուրքիայի կառավարությանը: Ընդգծվեց հայերի նվիրվածությունը Օսմանյան պետությանը, դրանով հանդերձ ներքին գործերի նախարար Թալեաթ Բեյին մտահոգություն էր հայտնվում Էրզրումի վիլայեթի՝ հալածանքների ենթարկվող հայերի վիճակի վերաբերյալ:[5]

Չնայած ձեռնարկված միջոցառումներին, Թուրքիայի իշխանությունների և հայ ազգաբնակչության միջև լարվածությունը մեծանում էր: Ստեղծվում էր կարծիք, որ «գերմանացիների հաղթանակի դեպքում թուրքական հողի վրա վերջ կդրվի հայ ժողովրդի գոյությունը»:[6] Դեկտեմբերի վերջերին պատրիարք Զավենն այցելեց Կոստանդնուպոլսում գերմանական դեսպան Վանգենհեյմին: Ըստ դեսպանի՝ արտաքին քաղաքականության գերատեսչությանն ուղղված 1914թ. դեկտեմբերի 29-ի հաղորդման, պատրիարքը բնական էր համարում հայկական վիլայեթներում բարենորոգումների հարցի հետաձգումը մինչև պատերազմի ավարտը: «Ընթացիկ պահի» գլխավոր խնդիր էր ներկայացվում հայկական ազգաբնակչության անվտանգությունը: Մատնանշվում էր օժանդակ աշխատանքներում օգտագործելու համար մինչև 45 տարեկան հայ տղամարդկանց բանակ զորակոչելով՝ հայկական գյուղերի ամայացումը, որոնք սկսել են ենթարկվել «զինվորության» հարձակումների: Դեսպանը պատրիարքին հավաստիացրեց հաղթական պատերազմից հետո «բարենորոգումների վերսկսմանը» ձեռնարկելու Գերմանիայի ձգտման մասին: Վանգենհեյմը ցանկալի համարեց նաև Կոստանդնուպոլսի պատրիարքի և Ազգային ժողովի միջոցով Գերմանիայի նկատմամբ հայ ազգաբնակչության դրական վերաբերմունքի ձևավորումը:[7]

Հայկական հարցի վերաբերյալ դեսպան Վանգենհեյմին դիվանագիտական մոտեցումն արտացոլվեց նաև պատրիարք Զավենի ամանորյա բարեմաղթանքների պատասխանում, որտեղ նշվում էր, թե Գերմանիան, որպես Թուրքիայի դաշնակից, քրիստոնյա ազգաբնակչությանը պաշտպանելու համար կձեռնարկի բոլոր միջոցները. «Ապահով եղեք բոլորովին, ոչ մեկ Հայու քիթը պիտի արյունի, ոչ հոս և ոչ գավառներու մեջ»:[8]

Այնինչ իրերի ճշմարիտ վիճակն արտացոլվում էր ռազմական նախարար Էնվեր փաշայի խոսքում, որը Սարիղամիշի մոտ ռուսական զորամիավորումների կողմից դեկտեմբերին կրած պարտությունից հետո, 1915թ. փետրվարին, իր մոտ հրավիրված Կոստանդնուպոլսի պատրիարքին հայտնում էր հայերին սպառնացող վտանգի առկայության մասին: «Եթե հայերը փորձեն հեղափոխություն կատարել, կամ օգնեն Ռուսաստանին, ապա ես ոչնչով չեմ կարողանա օգնել»:[9]

1915թ. փետրվարին ուժեղացավ Կիլիկիայի կաթողիկոս Սահակին հասցեագրված՝ հայերի նկատմամբ երիտթուրքերի կողմից նախապատրաստվող եղեռնի վերաբերյալ լուրերի հոսքը: 1915թ. մարտի 2-ին կաթողիկոս Սահակը Կոստանդնուպոլսի պատրիարք Զավենի մոտ ուղարկեց գաղտնի պատվիրակ՝ տեղեկացնելով վերահաս աղետի մասին: Մարտի 8-ին

պատվիրակը պատրիարքին ներկայացրեց եղեռնի նախապատրաստության վերաբերյալ վկայությունների մասին տեղեկատվություն: Զարմացած պատրիարքը՝ «Կաթողիկոս Սահակը հոռետես անձնավորություն է»[10], - ասելով, տեղեկությունների իսկությունը ստուգելու նպատակով մի քանի օր պահանջեց: Թալեաթ փաշայի և գերմանական դեսպան Վանգենհեյմի հետ հանդիպումներն ավարտվեցին հայկական անհանգստությունների չհիմնավորվածության մասին հավաստիացումներով: Կոստանդնուպոլսի պատրիարքը կաթողիկոս Սահակին հորդորեց հանդես բերել զգուշություն, զբաղվել ընթացիկ գործերով, իշխանություններին առիթ չտալ նեղելու հայերին:[11]

Այդուհանդերձ՝ տագնապալի լուրերը Կոստանդնուպոլսի պատրիարքին դրդեցին 1915թ. մարտի 31-ին մեծ վեզիր Սալիմ Հալիմ փաշային ներկայացնել «թաքրիր», ուր ասվում էր, թե համաձայն վիլայեթներից հասած վկայությունների՝ ապահով չեն հայերի «պատիվը, արժանապատվությունը և կյանքը»: Այս առումով նշվում էր, որ Կոստանդնուպոլսի պատրիարքարանի կողմից ներկայացված բոլոր փաստերը թողնվել են անհետևանք, հավաստիացումները՝ անարդյունք, ավելին՝ տեղի է ունենում վիճակի վատացում: Նշվում էր, որ 1908թ. Թուրքիայի սահմանադրության վերահաստատումից հետո հայկական պատրիարքարանը ներդրել է բոլոր ջանքերը, սատարելու կառավարության ձեռնարկած՝ երկրի զարգացման միջոցառումներին և ամրապնդելու մահմեդական ազգաբնակչության հետ բարի-դրացիական հարաբերությունները: Ինչպես նշվում էր «թաքրիրում», սկսված Առաջին համաշխարհային պատերազմը դժբախտություն է հանդիսանում հայ ազգաբնակչության համար: Հավաստիացնելով հայերի՝ իրենց քաղաքացիական պարտքը կատարելու պատրաստակամության մասին, այդուհանդերձ տագնապ էր հայտնվում Թուրքիայում հայերի կոտորածի նախապատրաստման մասին շրջող լուրերի առիթով: Կոստանդնուպոլսի, Անատոլիայի և Ադանայի՝ կոտորած ապրած հայերը, պատրիարքի խոսքերով, հանդես են բերում հիմնավորված տագնապ: Առավել ևս, որ տեղական իշխանություններն անուշադիր են հայերի անվտանգության ապահովման հարցում: Ստեղծված իրավիճակում պատրիարքը Թուրքիայի կառավարությանը կոչ էր անում «հայտարարություն» հրապարակել, որը կհանգստացներ հայերին և կխթաներ պաշտոնյաների՝ օրենքի պահանջները կիրառելու ծառայողական ջանքերը:[12]

Տարբեր ճանապարհներով Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդին էին հասնում Օսմանյան Թուրքիայում հայերի նկատմամբ բռնությունների, խոշտանգումների և սպանությունների լուրեր:[13] 1915թ. ապրիլի 7-ին Հայ Առաքելական եկեղեցու առաջնորդը Ռուսաստանի արտաքին գործերի նախարարին տեղեկացրեց տաճկահայերի բացարձակ ծանր դրության մասին. «Համաձայն այլ աղբյուրներով հաստատված հեռագրական հաղորդագրության, զինաթափված, անպաշտպան հայերի կոտորած է տեղի ունենում Էրզրումում, Դերջանում, Զեյթունում և ծայրամասերում, արյունալի ընդհարումներ՝ Բիթլիսում, Վանում, Մուշում, բռնություններ, թալան, սպանություններ՝ Էգինում, Կիլիկիայում, առկա է ամբողջ հայ ազգաբնակչության տնտեսական սնանկացում: Իմ հոտն անհանգստանում է»:

Թուրքիայում տեղի ունեցող քաղաքական գործընթացի բարդ բնույթը Հայոց Հայրապետին մղեց արևմտահայերին պաշտպանելու համար դիմել արտաքին գործերի նախարար Սազոնովին. «Ձերդ Բարձր Գե-

բազանցությանը թախանձագին խնդրում եմ այս օրհասական պահին իմ ժողովրդին չզրկել հետագա մարդասիրական հովանավորչական պաշտպանությունից, բոլոր հնարավոր միջոցներով փրկել անմեղ զոհվող քրիստոնյաներին»: Ռուսաստանի և Թուրքիայի միջև ռազմական գործողությունների առկայությունը կտրուկ սահմանափակել էր տաճկահայերին աջակցելու Պետերբուրգյան արքունիքի հնարավորությունները: Այս առումով Գևորգ 5-րդը հարկ համարեց օգտագործել չեզոք երկրների հնարավորությունները. «Ակնածանքով խնդրում եմ հանուն մարդասիրության և քրիստոնեության, հնարավոր համարեք հիշյալ պետություններում ձեր դեսպաններին հանձնարարել ազդելու վերջիններիս կառավարությունների վրա՝ Տաճկահայաստանում հայերի ջարդերը և սանձարձակությունները դադարեցնելու նպատակով»:[14]

Օսմանյան Թուրքիայի համար ռազմական իրավիճակի վատթարացումը, երբ ռուսական զորքերը պատրաստվում էին մտնել Արևմտյան Հայաստան, իսկ անգլիացիները և ֆրանսիացիները Կոստանդնուպոլիսը գրավելու համար իրագործում էին Դարդանելյան գործողությունը, երիտթուրքերին՝ հայ ազգաբնակչության տեղահանության և զանգվածային բնաջնջման իրենց վաղեմի ծրագրի իրականացման ազդակ հանդիսացավ: 1915թ. ապրիլի 8-ին սկսվեց Զեյթունի բնակչության տեղահանությունը: Գաղթեցվածների երկու քարավաններից մեկն ուղարկվեց դեպի Անգորայի մերձճահճային Սուլթանիա տեղանք, իսկ երկրորդը՝ Տեր-Զորի անապատ:[15] Կիլիկիայի կաթողիկոս Սահակը տարածաշրջանում «ավելորդ արյունահեղությունից» խուսափելու և հայ ազգաբնակչության նկատմամբ զանգվածային բռնություններ թույլ չտալու նպատակով հավանություն չտվեց թուրքական իշխանությունների գործողություններին զինված դիմադրություն ցույց տալու առաջարկին:[16] Աքսորված զեյթունցիներին Կոնստանդնուպոլսի պատրիարք Զավենի ուղարկած բժշկական և մարդասիրական օգնությունները տեղ չհասան՝ ներքին գործերի նախարար Թալեաթ փաշայի՝ «գերագույն նկատառումներով» արգելքի պատճառով:[17]

1915թ. ապրիլի 15-ին Թուրքիայի երիտթուրքական ղեկավարության Թալեաթ-Էնվեր-Նազիմ եռապետությունը գավառների իշխանություններին հրահանգեց ապրիլի 24-ի լուսաբացին սկսել հայկական ազգաբնակչության՝ դեպի արաբական անապատներ տեղահանությունը: Այդ օրն, ինչպես հայտնի է, իրականացվեց Կոստանդնուպոլսի հայ մտավորականության 225 հայտնի ներկայացուցիչների ձերբակալությունը, որոնց մեծ մասն ուղարկվեց Անգորայի, Կոնիայի և Դիարբեքիրի հավաքակայան-ճամբարներ:[18] Կոստանդնուպոլսի կենտրոնական Չանքը բանտում հայտնվեցին հասարակական 99 ականավոր գործիչներ: Նրանցից հինգը՝ վարդապետներ Կոմիտասը (Սողոմոն Սողոմոնյան), Գրիգորիոս Պալաքյանը, Հովհաննես Կարապետյանը, քահանաներ Հուսիկ Քաջունին և Վարդան Գարակեօզյանը հոգևորականներ էին:[19]

1915թ. ապրիլի 26-ին պատրիարք Զավենը հուշագիր ներկայացրեց մեծ վեզիր Սայիդ Հալիմ փաշային: Դրանում արտահայտված էր հայերի տագնապը կատարված ձերբակալությունների վերաբերյալ, որոնք վկայում էին կառավարության՝ հայերի նկատմամբ անվստահության մասին: Մեծ վեզիրը ժխտեց հայերի նկատմամբ «անվստահության» գաղափարը և կառավարության անունից հավաստիացրեց հայերի նվիրվածության մասին իր կարծիքի անփոփոխությունը: Կատարված ձերբակալություններ-

ը ներկայացվեցին սոսկ որպես կայսրության «ռազմական անվտանգությունն» ապահովող անհրաժեշտության հետևանք: Պատժիչ միջոցների առիթ էր ներկայացվում Վանի հայերի ապրիլի 8-ի ինքնապաշտպանությունը, որն, իբր, կառավարությանը դրդել էր դիմել համապատասխան քայլերի: Մեծ վեզիրը խոստանում էր կարգապահության և օրինականության միջոցներ ձեռք առնել:[20]

Բնականաբար չէր մատնանշվում երիտթուրքական ղեկավարության հրահանգը՝ ձերբակալությունների միջոցով հայ ազգաբնակչությանը զրկել ազգային և հոգևոր առաջնորդներից: Թուրքական իշխանությունների այս գործելակերպն ակնառու արտահայտվեց Վանի 1915թ. ապրիլյան իրադարձությունների ժամանակ, երբ տանջամահ արվեցին 12 հոգևորականներ, տասնմեկ վարդապետներ՝ Վ. Խաչատրյանը, Պ. Գրիգորյանը, Օ. Թոմասյանը, Ե. Խաչատրյանը, Պ. Կարապետյանը, Գ. Հովհաննիսյանը, Եղիան, Պողոսը, Ե. Մոկացյանը, Ե. Տեր-Սարգսյանը, Ա. Մանուկյանը և սարկավագ Ներսեսը: Վանում զոհված հոգևորականների այս ցուցակը վկայում է թուրքերի կողմից ոչ թե պարզապես հոգևորականների, այլ Հայոց եկեղեցու այն ղեկավարների գիտակցված ոչնչացման դիտավորությունը, ովքեր կարող էին կազմակերպել և մասնակցել ինքնապաշտպանությանը:[21]

Թուրքիայի բնաջնջվող հայ ազգաբնակչությանը մարդասիրական աջակցություն ցույց տալու վերաբերյալ Ամենայն Հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդի՝ Ռուսաստանին ուղղված դիմումը հաստատվեց Կովկասի փոխարքայի դիվանագիտական ծառայության կողմից: Ռուսաստանի կառավարությունը դիմեց դաշնակից Անգլիային ու Ֆրանսիային՝ հայերի ոչնչացման պատասխանատվությունը թուրքական կառավարության ղեկավարության վրա դնելու վերաբերյալ Բարձր Դռանը դիմում ուղարկելու մասին:[22] Դիմումներ հղվեցին նաև չեզոք երկրներին: ԱՄՆ Պետական քարտուղար Բրայանը 1915թ ապրիլի 27-ին Կոստանդնուպոլսում ամերիկյան դեսպան Գ. Մորգենթաուին հրահանգեց նկատի առնել Ամենայն Հայոց կաթողիկոսի խնդրանքը: Մորգենթաուն, իր կառավարությունից հրահանգ ստացած իտալական դեսպանի հետ միասին, մայիսի 1-ին դիմեցին Բարձր Դռանը՝ ի պաշտպանություն հայ ազգաբնակչության: Դրան ի պատասխան ներքին գործերի նախարար Թալեաթ բեյը հայտարարեց «անմեղ մարդկանց» պաշտպանելու վերաբերյալ տեղական իշխանություններին տրված կարգադրության մասին:[23]

1915թ. մայիսի 13-ին Պետրոգրադյան հեռագրական գործակալությունը հրապարակեց Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի հայտարարությունը հայկական ազգաբնակչության ոչնչացման ամբողջ անձնական պատասխանատվությունը թուրքական կառավարության վրա դնելու վերաբերյալ: Ջարդերի կազմակերպման համար դատապարտման ենթարկվեցին թուրքական տեղական վարչակարգերի ներկայացուցիչները:[24] Որպես Թուրքիայի կառավարության պատասխան, մայիսի 15-ին հետևեց հայ ազգաբնակչության տեղահանության մասին օրենքի ընդունումը, որը, ըստ էության, սկսվեց ամսի 20-ին:[25]

Մայիսին ողբերգական իրադարձություններ տեղի ունեցան Խարբերդում: 1915թ. մայիսի 1-ին ձերբակալվեցին հայ ազգաբնակչության անվանի ներկայացուցիչները: Ձենք փնտրելու պատրվակով սկսվեցին նրանց խոշտանգումները: Ձերբակալվածներից արդյունքի չհասնելով,

թուրքերն անցան կանանց խոշտանգումներին: Այս իրավիճակում անվանի քաղաքացիները և հոգևորականությունը որոշեցին ունեցած անձնական զենքի հանձնման ճանապարհով փրկել ձերբակալվածներին: Փոքրաթիվ ատրճանակների և հրացանների հանձնումը ժամանակավորապես դադարեցրեց խոշտանգումները: Սակայն, այնուհետև, շատ շուտով դրանք վերսկսվեցին: Ընդ որում՝ տանջանքների առարկա դարձան հոգևորականները, որոնցից, օգտագործելով խոշտանգման տարբեր միջոցներ, պահանջում էին հանձնել զենքի «իսկական պահեստները», այրում, քաշում, խոկում էին մորուքները: Գլուխները մեքենայով այնպես էին ճզմում, որ մարդիկ ուշաթափվում էին: Կախում էին և կիսամեռ վիճակում կախաղանից իջեցնում՝ պահանջելով, որպեսզի անգիտակից վիճակում գտնվող զոհերը հայտնեն իրենց գաղտնիքները և ստորագրեն այն ամենը, ինչ կհրամայեն իրենց: Առանց որևէ խղճահարության կրունկներին մեխեր էին խփում, պայտում, խաչում»:[26]

Հոգևորականության նկատմամբ նման վերաբերմունքը շարունակվեց շատ այլ վայրերում. «Խարբերդից երեք ու կես ժամվա ճանապարհի հեռու գտնվող Կարմիր գյուղի քահանա Տեր-Ասատուրին կիսամեռ վիճակում կախեցին, հետո իջեցրին կախաղանից և պահանջեցին ցույց տալ այն տեղը, որտեղ պահվում է զենքը: Դժբախտը վազեց Խոյլու գյուղ և նետվեց ջրհորը, որտեղից ժանդարմները անմիջապես հանեցին և երկարատև խոշտանգումներից հետո կացինով ջախջախեցին գլուխը»:[27] Նույն բախտին արժանացավ մեկ այլ հոգևորական. «Փալուեցի մի քահանայի՝ Տեր-Ատոմին, ձիու նման քամբեցին, նստեցին վրան և ժամուկես քշեցին: Նրան հասցրին ուժասպառության և այնուհետև պահանջեցին, որ նա հայտնի գաղտնիքները ու ցույց տա թաքցրած զենքի տեղը. Նա աննկուն և կտրականապես հրաժարվեց, այդժամ նրան պայտեցին և խաչեցին»:[28]

Այս իրավիճակում Կոստանդնուպոլսի պատրիարքը 1915թ. մայիսի 27-ին արդարադատության նախարարին «թաքրիր» ներկայացրեց հայ հոգևորականության, ինչպես նաև Հայոց եկեղեցու ծխականների նկատմամբ գործադրվող բռնությունների ու գազանությունների վերաբերյալ: Գրավոր պատասխանի փոխարեն նախարարը բավարարվեց բանավոր հաղորդմամբ, որ նման «թաքրիրների» ներկայացնելը, որոնք վերաբերվում են քաղաքականության ոլորտին, չի մտնում պատրիարքի իրավասությունների մեջ: Դա նշանակում էր Կոստանդնուպոլսի պատրիարքի իրավասությունների սահմանափակում: Դրանով նա, փաստորեն, զրկվում էր իր ենթակաների և հոտը պաշտպանելու իրավունքից:[29]

Մեծ վեզիրն ավելի բացահայտ արտահայտվեց 1915թ. հունիսի 27-ին, երբ, խոստովանելով հայ ազգաբնակչության տեղահանության «հիվանդագին լինելը», միաժամանակ ժխտեց այդ պարագայում թուրքերի պատասխանատվությունը: «Դրանում մեղավոր ենք ոչ թե մենք, այլ դուք և ձեզ պաշտպանող տերությունները»[30], - հայտարարեց նա: Ամբողջ կատարվածի դրդապատճառ էին ներկայացվում Հայկական հարցը և Արևմտյան Հայաստանում բարեռնորոգումների համար պայքարը: 1915թ. հոկտեմբերին պատրիարք Զավենը Պողոս Նուբար փաշային հայտնեց Թուրքիայի ղեկավարության քաղաքականության կանխամտածված էության մասին. «Կառավարության դիտավորությունն այն է, որ մեկընդմիշտ վերջ տրվի Հայկական հարցին՝ ամբողջ Թուրքիայում կոտորելով ողջ հայ ազգաբնակչությանը»:[31]

1915թ. վերջերին Կիլիկիայի կաթողիկոսի աքսորը Հալեպ առաջ բերեց ներքին գործերի նախարար Թալեաթ բեյի դժգոհությունը: Անհապաղ Հալեպի նահանգապետին ուղարկվեց աքսորված հայ հոգևորականության նկատմամբ դատաստան իրագործելու մասին ծածկագիր-հեռագիր. «1-ը դեկտեմբերի, 1915թ.: Մեզ լուրեր են հասել, որ որոշ հոգևորականներ ուղարկվել են այնպիսի կասկածելի տեղեր, ինչպիսիք են Սիրիան և Երուսաղեմը, մինչդեռ, հայ հոգևորականությունը պետք է ոչնչացվի առաջին հերթին: Այդպիսի լուծումը հանդիսանում է աններելի բացթողում»:[32]

Պատրիարք Զավենը Օսմանյան Թուրքիայի հայ հոգևորականության նկատմամբ պատիժների կիրառման ընդհանուր վիճակը 1915թ. դեկտեմբերի 28-ին ներկայացրեց ամերիկյան թեմի առաջնորդ, ծայրագույն վարդապետ Վահունուն: «Կարինի ռազմական դատարանի կողմից աքսորված Տրապիզոնի վարդապետ Գևորգ Տուրյանը սպանվեց ճանապարհին, Շապին-Գարահիսարի վարդապետ Վաղինակ Թորեկյանը զոհվեց քաղաքի գնդակոծության ժամանակ, Բաբերդի վարդապետ Անանիա Հազարապետյան կախաղան է բարձրացվել տեղական իշխանությունների կողմից, գավազաններով ծեծված Մուշի վարդապետ Վարդան Հակոբյանը մահացավ բանտում, կտտանքների ենթարկված Տիգրանակերտի վարդապետ Մկրտիչ Չլխաքյանը մահացավ բանտում, ձերբակալված և Սեբաստիա աքսորված Եվդոկիայի վարդապետ Շավարշ Սահակյանը սպանված է ճանապարհին, Խարբերդի՝ շղթայված վարդապետ Պսակ Տեր-Խորենյանը, այլոց հետ մորթվեց Տիգրանակերտի ճանապարհին, Իզոգաթի եպիսկոպոս Ներսես Դանիելյանը, 450 այլ իզոգաթցիների հետ միասին, սպանվեց Սեբաստիայից ոչ հեռու՝ Ալիսայի ափերին, Եդեսիայի վարդապետ Արտավազդ Գալանտերյանը սպանվեց ջարդերից առաջ, քաղաքի կենտրոնում, 60-70 այլ հայերի հետ միասին»:

Առանձին-առանձին վկայություններ կային որոշ հոգևորականների նկատմամբ կիրառված պատիժների մասին, թեև հանգամանքները ամբողջությամբ մնում էին չպարզված. «Հաստատ զոհված են Բալուի եպիսկոպոս Եզնիկ Գալպակյանը, Աղերդի վարդապետ Եղիշե Ջանոյանը, Չարսվանջակի վարդապետ Գևորգ Նալբանդյանը, Երզնկայի և Կամախի վարդապետ Մելքիսեդեկ Հովիվյանը, Սամսունի վարդապետ Համազասպ Եղիսյանը և Գյուրունի եպիսկոպոս Խորեն Դիմաքսյանը, սակայն նրանց մահվան հանգամանքներն առայժմ անհայտ են»: Կցկտուր էին մի շարք հոգևորականների գտնվելու վայրի մասին տեղեկությունները. «Դատապարտվել են բանտարկության՝ Կեսարիայի եպիսկոպոս Խոսրով Փեհրեկյանը՝ ցմահ, և Բրուսայի վարդապետ Պարգև Դանիելյանը՝ հինգ տարով, սակայն նրանց գտնվելու վայրն անհայտ է: Նիկոմեդիայի եպիսկոպոս Ստեփանոս Հովակիմյանը, Կոնիայի վարդապետ Գարեգին Խաչատրյանը և Պանդիրմայի եպիսկոպոս Կարապետ Մաջլիմյանը աքսորվել են հոտի հետ միասին՝ առաջինը Հալեպ, երկրորդը՝ Մամբիջ և երրորդը՝ Քիլիսեի շրջանի Ազիզե գյուղ»:[33] Որպես կենդանի էին հիշատակվում Սեբաստիայում տնային կալանքի տակ գտնվող եպիսկոպոս Գնել Գամքերյանը, Իզմիրի եպիսկոպոս Մատթեոս Ինեջյանը և եպիսկոպոս Պետրոս Սարաջյանը: Կաթողիկոս Սահակը Հալեպից տեղափոխվել էր Երուսաղեմ:[34]

Ինչպես հայտնի է՝ 1915թ. ցեղասպանությունը գործնականում ընդգրկեց Թուրքիայի ամբողջ հայությունը: Պատրիարք Զավենը գրում էր. «Այս գազանային համընդհանուր սպանդի մեր զոհերի թիվը միլիոնից

պակաս չէ. բոլոր մնացած հայերը՝ բացի Կոստանդնուպոլսի, Իզմիրի, Քյոթահիայի հայերից և բողոքական ու կաթոլիկ մի քանի զինվորական ընտանիքներից, արտաքսվել և քշվել են անապատներ»:[35] Պատրիարքը եղեռնի պատրվակ էր նշում օտոմանյան իշխանությունների ձգտումը՝ թույլ չտալ Արևմտյան Հայաստանի կորուստ: Նշվում էր երիտթուրքական իշխանությունների քամահրանքը միջազգային իրավունքի բոլոր նորմերի նկատմամբ. «Օսմանյան պաշտոնական և ոչ պաշտոնական անձանց համար մեր բոլոր աղերսներն ու արտասուքները ոչինչ չեն նշանակում: Ոչ մի ազդեցություն չունեցան չեզոք պետությունների ոչ պաշտոնական և կիսապաշտոնական կարգադրությունները: Ամերիկյան դեսպանի և բուլղարական դեսպանորդի բազմաթիվ դիմումները չունեցան ոչ մի ներգործություն և չկարողացան կասեցնել հետապնդումները, քանի որ օսմանյան կառավարությունը Հայկական հարցը համարում էր իր ներքին գործը...»:[36]

1915թ. մարտի 17-ին Հալեպի առաջնորդարանը Կոստանդնուպոլսի պատրիարքին տեղեկացրեց Հալեպ, Տեր-Զոր, Մոսուլ, Կերկե աքսորված հայերի ծանր աստիճան աղետալի վիճակի մասին: Ստացվող ամենօրյա տեղեկություններն անարգանքների ու կոտանքների այնպիսի մանրամասներ էին հաղորդում, որոնք կարող էին «նույնիսկ ժայռերի գութը շարժել»:[37] Պատրիարք Զավենը մայիսի 12-ին դիմեց Կոստանդնուպոլսում գերմանական դեսպան Մետերնիխին՝ հաղորդելով թուրքական իշխանությունների կողմից հայկական հետապնդումների շարունակման մասին, որ չեն դադարում սպանություններն ու թալանը, իսկ տեղահանվածները ողորմելի գոյություն են քարշ տալիս Սիրիայի և Միջագետքի անապատներում, որպես փրկություն սպասելով իրենց ֆիզիկական մահվանը և, որ տեղում մնացած հայերին թուրքական կառավարողներն արգելում են դավանել իրենց կրոնը, իսկ եպիսկոպոսների մեծ մասը մորթվել են: Ցանկություն էր հայտնվում, որպեսզի Գերմանիան գթասրտություն հանդես բերի Թուրքիայում բնաջնջվող հայ ազգի նկատմամբ:[38]

1916թ. հուլիսի 28-ին արդարադատության և կրոնի նախարարությունը պատրիարք Զավենին տեղեկացրեց սուլթանի կողմից հաստատված և նույն օրը մամուլում հրապարակված եկեղեցական բարեփոխման իրագործման վերաբերյալ «Կանոնադրության» մասին: Ըստ դրա՝ միավորվում էին Սիսի և Աղթամարի կաթողիկոսությունները, Կոստանդնուպոլսի և Երուսաղեմի պատրիարքությունները: «Կանոնադրությամբ» վերացվում էին Կոստանդնուպոլսի պատրիարքի պաշտոնը և Հայոց պատրիարքությունը՝ Թուրքիայի մայրաքաղաքում: Դրա փոխարեն նախատեսվում էր միայն Երուսաղեմում գտնվող և Էջմիածնի Մայր աթոռից անկախ կաթողիկոս-պատրիարքի առաջնորդական տեղապահի ներկայացուցչություն: Պատրիարքության դռները և փաստաթղթերը կնքվեցին, իսկ ինքը՝ Զավեն պատրիարքը, աքսորվեց Բաղդադ: Դեպի նշանակված վայր Զավեն պատրիարքի ուղևորության անվտանգությունն ապահովեց ամերիկյան դեսպան Մորգենթաուի և գերմանական դեսպանորդի Մետերնիխի միջամտությունը, որը թուրքերին հնարավորություն չտվեց իրագործել նրա ֆիզիկական ոչնչացման ծրագիրը: Թուրքիայի կառավարության որոշումը նպատակ էր հետապնդում՝ մայրաքաղաքում վերացնել հայ ազգաբնակչության ներկայացուցչական կենտրոնը, որը զանազան գրությունների միջոցով իրականացվում էր իր հոտի պաշտպանությունը ու նաև՝ խզել կապը Ռուսաստանի սահմանների ներսում գտնվող Էջմիածնի Մայր աթոռի հետ:

1916թ. հուլիսի 28-ին արդարադատության և կրոնի նախարարությունը Կիլիկիայի կաթողիկոս Սահակին տեղեկացրեց Թուրքիայում Հայոց եկեղեցու կառավարման վերափոխության իրականացման մասին: Նշվում էր, որ Երուսաղեմի ու Կոստանդնուպոլսի միացյալ պատրիարքությունը, սուրբ Հակոբի վանք նստավայրով, հանձնարարվում է նրան: «Կանոնադրության» համաձայն կաթողիկոս-պատրիարք Սահակին կից պետք է լինեին հոգևոր, ինչպես նաև՝ խառը ժողովներ: Հայտարարվում էր Կոստանդնուպոլսում հայերի Ազգային ժողովի լուծարման մասին, արգելվում էր հոգևորական գործերին աշխարհիկ անձանց միջամտությունը: Կարգադրվում էր Թուրքիայում Հայոց եկեղեցու կառավարման համար առանձին կառույցներ ստեղծել:

Կաթողիկոս Սահակն իր այդ «անսպասելի պաշտոնի» մասին՝ Օսմանյան Թուրքիայի կառավարության որոշումն ընդունեց առանց ոգևորության: Սովորական պայմաններում կառավարության որոշումը կմերժվեր, (քանզի դրանով Կիլիկիայի կաթողիկոսարանը Թուրքիայի կառավարության հետ կմտներ սուր բախման մեջ) բայց եղեռնի պայմաններում, հաշվի առնելով նոր ցնցումներից խույս տալու նպատակահարմարությունը, աքսորված հայ ազգաբնակչությանն օգտակար դառնալու, եկեղեցական մնացած ու պահպանված սեփականությունը կարգի բերելու անհրաժեշտությունը՝ այդ որոշումը լռությամբ ընդունվեց: Օգոստոսի 3-ին արդարադատության և կրոնի նախարարությունը կաթողիկոս Սահակին հայտնեց Կոստանդնուպոլսի պատրիարքի պաշտոնի վերացման և մայրաքաղաքում առաջնորդական տեղապահ նշանակելու անհրաժեշտության մասին: Օգոստոսի 6-ին կաթողիկոս Սահակը մայր տաճարում անցավ Երուսաղեմի և Կոստանդնուպոլսի պատրիարքի պարտականությունների կատարմանը: Կազմվեց կաթողիկոս-պատրիարքի վեց անձից բաղկացած հոգևոր ժողով, իսկ մնացած անդամները հաստատվեցին հոկտեմբերին:[39]

Ընդհանրացնենք. երիտթուրքերի կործանիչ քաղաքականությունը նշանակալի հարված հասցրեց Թուրքիայի Հայոց եկեղեցուն և հոգևորականությանը: Երիտթուրքական Թուրքիայում կաթողիկոսարան-պատրիարքարանը, փաստորեն, սոսկ «անվանական» բնույթ էր կրում:[40] 1912թ. հայկական եկեղեցիների ու վանքերի թիվը ավելի քան 2200 էր: 1915-1918թթ. ընթացքում թուրքերը բարբարոսաբար թալանեցին ու կործանեցին մոտ 2150 հայկական եկեղեցի ու վանք: Սպանվեցին ավելի քան 4000 հոգևոր ծառայողներ: Թալանի ենթարկվեցին Արմաշի, Աղթամարի և Մուշի հայկական եկեղեցական կենտրոնները: Ոչնչացվեցին սբ. Առաքելի, սբ. Աստվածածնի, սբ. Սարգսի, սբ. Կարապետի վանքերի ձեռագրերն ու գրքերը: Միայն Դպրավանքի և Արմաշի ձեռագրերի պահոցներից ոչնչացվեցին մոտավորապես 500 ձեռագիր:[41] Տաճկահայաստանի ազատագրված մասում ռուսական զինվորականներին ապշեցրել էր թուրքերի բարբարոսական վերաբերմունքը հայկական եկեղեցիների նկատմամբ, որոնք կամ ոչնչացրել, կամ վերածել էին մզկիթների. «Թուրքերը հատուկ ջանադրությամբ ու բարբարոսաբար կործանում են հայոց եկեղեցիները: Եվ այդպես ամենուր: Մուշում կանգուն է մնացել միայն մեկ եկեղեցի և այն էլ այն պատճառով, որ այդտեղ տեղավորվել է թուրքական ալյուրի պահեստը: Ամենաբարբարոս կերպով ամենուր և մշտապես ապականված են ու պղծված սրբապատկերները: Թուրքերը հաստատ ցանկանում են երկրի երեսից ջնջել ամենայն հայկականը»:[42] Ռուսական զորքերի հարձակման

ժամանակ Արևմտյան Հայաստանի Հայոց եկեղեցիներից սոսկ որոշ մշակութային արժեքներ, ձեռագրեր և զարդեր փրկվեցին ու տեղափոխվեցին Էջմիածին:[43]

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] Օրմանյան Մ. Թուրքահայ աղետը: Պատմական փաստաթղթեր, Սբ. Էջմիածին, 1919: Հայոց եկեղեցի, Երուսաղեմ. 1924: Թեոդիկ. Հուշարձան ապրիլի տասնմեկին, Կոստանդնուպոլիս, 1919; Հայ հոգևորականության և իր հոտի Գողգոթան: 1915 աղետալի տարին: Բոստոն, 1980:

[2] Հատիտյան. Ա Նող Ղևոնդյան, Էջմիածին, 1965, թիվ 2-3-4; Ստեփանյանց Ստ. Հայ եկեղեցի 1914թվականին, Էջմիածին, 1996, թիվ 4; Հայոց ցեղասպանությունը և հայ առաքելական եկեղեցին 1915-1918թթ., Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, 2002, թիվ 6, էջ 87:

[3] Нападение Турции, «Русское Слово», 1914, 16 октября.

[4] Центральный государственный исторический архив (ЦГИА РФ), ф. 821, оп.13, д. 281, л. 16.

[5] Զավեն արքեպիսկոպոս. Պատրիարքական հուշեր, Կահիրե, 1947, էջ 424:

[6] Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919). Сборник документов, От ред. Микаелян В. А., Ер., 1995, с. 163.

[7] Там же, с. 168-170.

[8] Զավեն արքեպիսկոպոս. Պատրիարքական ..., էջ 84:

[9] Ամերիկյան դեսպան Հենրի Մորգենթաուի հուշերը և հայկական եղեռնի գաղտնիքները, Եր., 1990, էջ 286:

[10] Պալաքյան Գրիգորիս. Հայոց Գողգոթան, Եր., 1991, էջ 391:

[11] Նույն տեղում, էջ 75-78:

[12] 1915թ. Մեծ եղեռնի նախաշեմին Կոստանդնուպոլսի հայ պատրիարքարանի կողմից Բարձրագույն Դռանը հղված պաշտոնական գրության մասին տե՛ս Փափազյան Ա. Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Եր., 1998թ., 17-րդ, էջ 201-208:

[13] ЦГИА РФ, ф. 821, оп. 13, д. 279, л. 10-12.

[14] Геноцид армян в Османской империи. Под ред. Нерсисяна М. Г., Ер. 1983, 2-изд., № 143, с. 278.

[15] Хроника, Биржевые Ведомости, 1915, 21 мая.

[16] Геноцид армян..., № 206, с. 426.

[17] Из Турции, «Кавказское слово», 1915, 29 мая.

[18] Армяне в Константинополе, Биржевые Ведомости. 1915, 15 мая.

[19] Պալաքյան Գ. Հայոց գողգոթան..., էջ 96-99: Այվազյան Կ. Եղեռնապուրծ մասունք՝ վավերագիր վկայություն, Հայոց ցեղասպանության պատմության և պատմագիտության հարցեր, 2002, թիվ 6, էջ 78-83:

[20] Զավեն արքեպիսկոպոս. Պատրիարքական..., էջ 98-99:

[21] Օրմանյան Մ. Թուրքահայ աղետը. պատմական փաստաթղթեր, Սբ. Էջմիածին, 1919, էջ 30-31:

[22] Геноцид армян..., № 144-148, с. 279-281.

[23] Ամերիկայի Միացյալ Նահանգների վավերագրերը 1915-1916թթ. Հայոց ցեղասպանության մասին: Կազմ. Զաքարյան Տ., Եր., 2002, էջ 26-30:

[24] Русские источники о геноциде армян в Османской империи 1915-1916 гг. Сост. Аврамян Г.А., Севан-Хачатрян Т.Г., Ер., 1995, вып. 1, № 26, с. 21.

[25] Геноцид армян..., № 184, с. 360.

[26] Там же, № 225, с. 490.

[27] Там же, с. 490, 491.

[28] Там же, с. 491.
[29] Զավեն արքեպիսկոպոս. Պատրիարքական..., էջ 103:
[30] Նույն տեղում, էջ 121:
[31] Геноцид армян..., № 176, с. 332.
[32] Там же, № 220, с. 485, 486.
[33] Там же, № 179, с.341.
[34] Там же, с. 338-341.
[35] Там же, с. 343.
[36] Там же, с. 348.
[37] Զավեն արքեպիսկոպոս. Պատրիարքական..., էջ 179:
[38] Նույն տեղում, էջ 192, 193, 327, 328:
[39] Վավերագրեր Հայոց եկեղեցու պատմության, հ. 4, թիվ 58, էջ 227-230:
[40] Թեոդիկ. Գողգոթա հայ հոգեւորականութեան եւ իր հոտին 1915 աղետալի տարին, Բոստոն, էջ 31:
[41] Օրմանեան Մ. Հայոց եկեղեցին եւ իր պատմութիւնը, վարդապետութիւնը, բարեկարգութիւնը, արարողութիւնը, գրականութիւնը, եւ ներկա կացութիւնը, Բեյրութ, 1960թ. 6-րդ հրատ., էջ 258 - 265:
[42] Геноцид армян..., № 227, с. 497.
[43] Նորին վեհապետութեան տնօրինութիւններից. Արարատ, 1917, թիվ 1, էջ 21:

Резюме

Армянский геноцид и армянское духовенство в 1915-1916гг.

Микаел Минасян

В ходе геноцида предметом забот армянской церкви стала защита интересов западноармянской паствы. Константинопольский патриарх предпринял усилия по недопущению геноцида, а за тем – привлечению дипломатических представителей заграничных стран в Константинополе к прекращению варварства турок. Верховный католикос призвал державы Антанты и нейтральные страны принять меры по защите истребляемой паствы.

Геноцид нанес значительный ущерв армянской церкви и духовенству в Турции. Число армянских церквей и монастырей в 1912г. составляло более 2200. За время 1915-1918гг. произошло варварское уничтожение, ограбление и разрушение около 2150 армянских церквей и монастырей со стороны турок. Погибло более 4000 священослужителей. Уничтожение армянского духовенства со стороны младотурок носило сознательный и системный характер, чтобы лишить народ духовных предводителей и организаторов самозащиты. В 1916г. младотурки осуществили церковную реформу, чтобы разорвать связи западноармянского духовенства с Эчмиадзинским престолом и не допустить обращений Константинопольского патриархата о помощи к иностранным представителям.

Summary

The Armenian Genocide and the Armenian Clergy in 1915-1916.

Mikayel Minasyan

During genocide a subject of cares of the Armenian Church became protection of interests of mainly western - Armenian flock. The patriarchy of Constantinople has undertaken efforts on not assumption of genocide, and then - to attraction of diplomatic representatives of foreign countries in Constantinople to the termination of the Turks' barbarity. The Supreme Catholicos has called

powers of Antanta and the neutral countries to arrange protection of exterminated flock.

The genocide has caused significant damage to the Armenian Church and to clergy in Turkey. A number of the Armenian churches and monasteries in 1912 formed more than 2200. During 1915-1918 there was a barbarous destruction, robbery and destruction of about 2150 Armenian churches and monasteries by the Turks. More than 4000 clerics were killed. The destruction of the Armenian clergy had conscious and system character by the Young Turks to deprive people of spiritual leaders and organizers of self-defense. In 1916 Young Turks have carried out church reform to break off contacts of the Western Armenian clergy with Echmiadzin throne and not to allow the patriarchy of Constantinople to call for help foreign representatives.